Յ. Վ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

# 2

*Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի երկրորդ դասարանի համար*

Վերահրատարակություն

***Նկարիչ՝ Արա Բաղդասարյան***

Երաժշտական ստեղծագործությունների համացանցային հղումներով

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373.167.1:78(075)
ԳՄԴ 85.31 ց72
Յ 671

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը
կարող եք գտնել շապիկին պատկերված
QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.
www.zangak.am/9789994114566
Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը
համապատասխան նյութերի անմիջական
հղումներն են:

Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա.
Յ 671 Երաժշտություն: 2-րդ դասարանի դասագիրք/Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2021.— 96 էջ:

ՀՏԴ 373.167.1:78(075)
ԳՄԴ 85.31 ց72

ISBN 978–99941–1–456–6

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2021
© Յուզբաշյան Յ., 2021
© Փահլևանյան Ա., 2021

# Սիրելի՛ փոքրիկ բարեկամներ

Այս դասագիրքը Ձեզ կծանոթացնի
երաժշտության տեսակներին:

Կսովորեցնի՝

- ունկնդրել երաժշտություն,
- երգել և պարել,
- նվագակցել երգերին ու հնչող երաժշտությանը,
- երգել ձեռքի նշաններով և նոտաներով,
- հորինել մեղեդիներ և նոտագրել:

Ձեզ բարի՛ երթ երաժշտության գեղեցիկ աշխարհում:







*Երգելու ժամանակ պետք է նստել կամ կանգնել ուղիղ, նստարանի հենակին չհենվել, շունչ վերցնել անաղմուկ, ուսերը չբարձրացնել:*



*Հովհաննես Թումանյան*



*Կոմիտաս*



**Ովքե՞ր են ստեղծում երգը:**
**Ովքե՞ր են կատարում երգը:**
**Ո՞ւմ համար է հնչում երգը:**



# ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԵՍԱԿՆԵՐԸ



## ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

Գնում ենք ուրախ, ձեռք ձեռքի տված,
Երգում միասին՝ աղջիկ ու տղա,
Փռված է մեր դեմ մոր գրկի պես բաց,
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

Վազում է մեզ հետ, աղմկում առուն,
Հեզ օրորվում են ծառերը աշնան,
Բոլորիս սիրով կանչում է, տանում
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

Ձգվում է տնից մինչև դասարան
Մանուկ օրերի ոսկեհյուս շղթան՝
Այնպե՜ս մտերմիկ, այնպե՜ս հարազատ,
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:



# ՔԱՅԼԵՐԳ

Ունկնդրենք կոմպոզիտոր Մարտին Մազմանյանի «Քայլերգը» և ռուս կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկու «Փայտե զինվորների քայլերգը»:

Դուք զգացի՞ք, որ այս ստեղծագործությունները ունկնդրելիս լսում եք կրկնվող համաչափ զարկեր, որոնք նման են ձեր զարկերակի խփոցին:

Այդ ստեղծագործությունները քայլելու ցանկություն են առաջացնում: Դրանք ***քայլերգեր են:***

Սովորիր

Երգիր

Քայլիր

*Սովորե՛ք «Ուղիղ կարգով» քայլերգը:*

**Ուղիղ կարգով**
**Կանգնենք շարքով,**
**Շարժվենք վաշտ-վաշտ**
**Մենք դեպի դաշտ:**

*Կրկներգ*



**Մե՛կ, երկո՛ւ,**
**Մի՛ն ձախ, մի՛ն աջ,**
**Մե՛կ, երկո՛ւ,**
**Դե՛պ առաջ:**
**Մե՛կ, երկո՛ւ,**
**Մի՛ն ձախ, մի՛ն աջ,**
**Քայլենք դե՛պ առաջ:**

**Շարժվենք, շարժվենք,**
**Լինենք հաջորդ,**
**Լինենք հաջորդ**
**Կուռ բանակին:**

*Կրկներգ*

**Մե՛կ, երկո՛ւ...**



*Քայլե՛ք և ծափով կամ թմբուկով ցո՛ւյց տվեք քայլերգերի զարկերը:*

# ՔԱՅԼԵՐԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ունկնդրենք ռուս կոմպոզիտոր Դմիտրի Կաբալևսկու «Քայլերգի երեք տեսակները»:

Դմիտրի Կաբալևսկու քայլերգերը լսելիս դուք զգացիք, որ նրանք մեկը մյուսից տարբերվում են իրենց տեմպով և հանդիսավորությամբ: Դրանք մենք կարող ենք բաժանել երեք տեսակի:



*Զինվորական քայլերգ*



*Մանկական քայլերգ*



*Մարզական քայլերգ*

*Քայլե՛ք և որոշե՛ք, թե որ քայլերգի երաժշտությունը որ նկարին է համապատասխանում:*

Սովորիր

Երգիր

Քայլիր

*Սովորե՛ք «Հայրենիք» երգը:*

## ՀԱՅՐԵՆԻՔ

Սարերդ՝ բարձրիկ,
Դաշտերդ՝ անծայր,
Ջրերդ՝ քաղցրիկ,
Արևդ՝ պայծառ:

Դու տվել ես մեզ
Ծաղիկ ու ծիծառ,
Երգ ու խնդություն,
Թե՛ ուսում, թե՛ խաղ:

Դու տվել ես մեզ
Թռիչքի թևեր,
Որ մենք բարձրանանք
Աստղերից էլ վեր:

Այս երգը մեր մեջ արթնացնում է քայլելու ցանկություն: Սա նույնպես ***քայլերգ է:***

*Փորձե՛ք երգել և քայլել այս երաժշտության հնչյունների ներքո:*



*Ծափով ցո՛ւյց տվեք ձեր սովորած քայլերգի, պարերգի և երգի զարկերը:*



*Վերհիշենք երաժշտական մի քանի հասկացություններ, որոնց դուք արդեն ծանոթ եք առաջին դասարանից:*

Երաժշտություն ունկնդրելիս մարդը առաջինը լսում, զգում և ընկալում է երաժշտության հավասարաչափ զարկերը, որոնք համընկնում են մեր սրտի զարկերի հետ, մյուսը երաժշտության շարժման արագությունն է, որին անվանում ենք ***տեմպ***:

Երաժշտական հնչյունները լինում են կարճ կամ արագ, երկար կամ դանդաղ տևողության:

Երաժշտության հնչյունների այդ տևողությունները գրի ենք առնում հատուկ նշաններով, որոնք կոչվում են ***նոտաներ:***

Այդ նոտաներն ունեն նաև վանկային անուններ: Օրինակ՝ կարճ կամ արագ տևողության նոտան գրվում է այսպես՝ ♪, կատարում ենք ***թի*** վանկով, իսկ երկար կամ դանդաղ տևողության նոտան գրվում է այսպես՝ ♩, կատարում ենք ***թա*** վանկով:

Այսպիսով՝ երաժշտական հնչյունների տարբեր տևողությունները միասին կատարելիս լսում ենք այդ երաժշտության մեղեդու ***ռիթմը:***

Սովորիր

Երգիր

Քայլիր

Նվագիր

*Սովորե՛ք «Քեռին եկավ մեր բակը» ժողովրդական երգը:*

## ՔԵՌԻՆ ԵԿԱՎ ՄԵՐ ԲԱԿԸ



*Քեռին եկավ մեր բակը,*
*Դու-լու-լու, դու-լու-լու, մեր բակը,*
*Մի մեծ կճուճ շալակը,*
*Դու-լու-լու, դու-լու-լու, շալակը:*
*Ոտի թոկը կտրվեց,*
*Դու-լու-լու, դու-լու-լու, կտրվեց,*
*Կճուճն ընկավ կոտրվեց,*
*Դու-լու-լու, դու-լու-լու, կոտրվեց:*



«Քեռին եկավ մեր բակը» երգի մեղեդու ռիթմի մեջ կան նաև դադարներ, որոնք երաժշտության մեջ անվանում են **պաուզա** (𝄽): Երգելիս այդ դադարը չեն երգում, այլ մտքում արտասանում ենք **«պա»** վանկը և ձեռքերը տանում դեպի կողմ:

*Երգե՛ք և յուրաքանչյուր հնչյուն ծափե՛ք:*




1 2 1 2 1 2 1 2

*Գրի՛ առեք երգի ռիթմը, զարկերը, պաուզաները և կատարե՛ք: Ծափե՛ք երգի ռիթմը, ոտքի թաթով հարվածե՛ք զարկերը, իսկ պաուզան ցո՛ւյց տվեք ձեռքերը դեպի կողմ տանելով:*



# ՊԱՐ

Ունկնդրենք Կոմիտասի «Շուշիկի պարը» և Արամ Խաչատրյանի «Ծերունիների պարը» ստեղծագործությունները:

Ի՞նչ զգացմունքներ են արթնացնում ձեր մեջ ունկնդրած երաժշտական ստեղծագործությունները:

Դուք զգացի՞ք, որ այդ պարերը ունկնդրելիս ձեր մեջ պարելու ցանկություն առաջացավ: Երբեմն պարին ուղեկցում է երգը: Պարի այդ տեսակը կոչվում է ***պարերգ:***

Սովորիր

Երգիր

Քայլիր

*Սովորե՛ք «Նախշու՛ն կաքավ, կաքավի՛կ» ժողովրդական պարերգը:*

## ՆԱԽՇՈՒՆ ԿԱՔԱՎ, ԿԱՔԱՎԻԿ

*Նախշո՛ւն կաքավ, կաքավի՛կ,*
*Կարմրատոտի՛կ կաքավիկ:*

*Լուսնակը՝ սարի տակին,*
*Մամուռը՝ քարի տակին,*
*Կաքավիկ կանգնե քարին,*
*Ձեն կուտա ձագուկներին:*

*Նախշո՛ւն կաքավ, կաքավի՛կ,*
*Կարմրատոտի՛կ կաքավիկ:*

*Լուսնա՛կ, դու կամաց գնա,*
*Մեր տան վերևո՛վ գնա,*
*Կաքավիկին որ տեսնես,*
*Բարև՛ տուր, անցի՛ր գնա:*







*Պարե՛ք և ծափով կամ դափով ցո՛ւյց տվեք պարերգի զարկերը:*

# ՊԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ունկնդրենք կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանի «Աղջիկների պարը» և Ալեքսանդր Սպենդիարյանի «Տղամարդկանց պարը» ստեղծագործությունները:

Ի՞նչ զգացումներ և ի՞նչ տրամադրություն են արթնացնում ձեր մեջ այդ ստեղծագործությունները և ինչո՞վ են իրարից տարբերվում:

*Սովորե՛ք «Հոպա զարկե՛ ու քելե՛» ժողովրդական երգը:*

Սովորիր

Երգիր

Քայլիր

## ՀՈՊԱ ԶԱՐԿԵ ՈՒ ՔԵԼԵ

Կուժն առա, գացի աղբյուր,
Վա՜յ, լե՛, լե՛, ջա՜ն, լե՛, լե՛,
Լցրեցի կժով պաղ ջուր,
Հոպա զարկե՛ ու քելե՛:

Սարեն իջավ զույգ աղջիկ,
Վա՜յ, լե՛, լե՛, ջա՜ն, լե՛, լե՛,
Զույգի գոգնոցն է լաստիկ,
Հոպա զարկե՛ ու քելե՛:

Ջուր կուգա բարձր սարեն,
Վա՜յ, լե՛, լե՛, ջա՜ն, լե՛, լե՛,
Կթափվի մարմար քարեն,
Հոպա զարկե՛ ու քելե՛:

Սովորաբար այս երգը կատարում են պարելով՝ ձեռք ձեռքի բռնած և կիսաշրջան կազմած, որովհետև այն ***պարերգ է:***



*Երգե՛ք «Հոպա զարկե՛ ու քելե՛» պարերգը և միաժամանակ պարե՛ք:*

Ունկնդրենք կոմպոզիտորներ Էդվարդ Միրզոյանի «Տիկնիկների պարը», Արեգ Լուսինյանի «Արջուկնե-րի պարը» և Մարտին Մազմանյանի «Կատվի պարը» ստեղծագործությունները:

Ի՞նչ տպավորություն դուք ստացաք՝ լսելով այս պարեղանակները: Որոշե՛ք յուրաքանչյուր ստեղծագործության տեմպը:

*Վերհիշե՛ք «Եկե՛ք մրցենք» ժողովրդական երգը:*

## ԵԿԵ՛Ք ՄՐՑԵՆՔ



*Մե՛նք քայլո՛ւմ ենք*
*Ո՛ւ երգո՛ւմ ենք,*
*Մի՛շտ ուսման մեջ*
*Առջևո՛ւմ ենք:*

*Դո՛ւք էլ, դո՛ւք էլ*
*Հո՛ ծույլի՛կ չեք,*
*Թե՛ կարող եք,*
*Մե՛զ հասեք:*





*թա, թա, թա, թա*



*թի – թի, թի – թի*

Ինչպես զգացիք, երգի զարկերի մի մասը շեշտ-ված է ուժեղ, իսկ մյուս մասը՝ անշեշտ, թույլ:

Եթե երգի ռիթմը և խոսքերը գրենք միասին, ապա կտեսնենք, որ ռիթմի և խոսքերի շեշտերը համընկնում են:



*Մե՛նք քայ – լո՛ւմ ե՛նք ո՛ւ եր – գո՛ւմ ե՛նք:*

Մի շեշտից մյուս շեշտն ընկած հատվածը անվանում են ***տակտ:*** Տակտերը մեկը մյուսից բաժանվում են տակտի գծերով:




Յուրաքանչյուր տակտի մեջ կա երկու զարկ՝ մեկը շեշտված, մյուսը՝ չշեշտված:




*Երգե՛ք և փորձե՛ք ուժեղ և թույլ ծափերի միջոցով ցույց տալ երգի շեշտված և չշեշտված զարկերը:*

*Կարո՞ղ եք ասել.*

1. Ի՞նչ է ***տակտը:***
2. Ի՞նչ է ***տեմպը:***
3. Ինչո՞վ են իրարից բաժանվում տակտերը:

Սովորենք «Ժամանակդ խնայի՛ր» հայկական ժողովրդական երգը: Այն կատակային բովանդակությամբ պարերգ է:

Սովորիր
Երգի՛ր
Պարի՛ր

Պարերգերը հայ ժողովրդի սիրելի երգատեսակներից մեկն է, մանավանդ երբ այն ունենում է խրատական բովանդակություն:

## ԺԱՄԱՆԱԿԴ ԽՆԱՅԻ՛Ր

*Իմ պապիկը գործասեր*
*Ամեն անգամ ինձ կասեր.*
*– Թե դաս ունես, սովորի՛ր,*
*Թե գործ ունես, կատարի՛ր:*

*Օրը կանցնի, կգնա,*
*Ինչ որ չանես, կմնա,*
*Եվ մի օր էլ կտեսնես՝*
*Ուրիշներից հետ կընկնես...*

*Դու տղա ես, ժիր տղա,*
*Գործը քեզնից թող դողա:*
*Ուշքդ վրադ միշտ պահի՛ր,*
*Ժամանակդ խնայի՛ր:*

Միայնակ կատարե՛ք երգը և ցուցադրե՛ք երգի բովանդակությանը և բնույթին համապատասխան պարային շարժումներ:

Գրե՛ք երգի ռիթմը և նշե՛ք շեշտերը և տակտի գծերը:




*Երգենք և միաժամանակ ծափով և ոտքի թաթի հարվածով ցո՛ւյց տվեք երգի ռիթմը և զարկերը:*

# ԵՐԳ

Ունկնդրենք կոմպոզիտորներ Կոմիտասի «Կաքավի երգը» և Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Օրորոցային» երգը:

*Ճանաչե՛ք և հիշե՛ք*



***Կոմիտաս***
***(1869–1935)***

*Հայ կոմպոզիտոր Կոմիտասը մեծ դեր է ունեցել հայ ազգային երաժշտության զարգացման գործում: Նա ժողովրդից հավաքագրել է ավելի քան երեք հազար ժողովրդական երգ, որոնց մի մասը նա բազմաձայնել և մշակել է: Դրանք այսօր էլ հարազատ ու սիրելի են մեր ժողովրդին:*

*Նա հանդես է եկել թե՛ որպես կոմպոզիտոր, թե՛ որպես երգիչ, խմբավար, բանաստեղծ և մանկավարժ: Նրա անունն են կրում Երևանի պետական կոնսերվատորիան, լարային քառյակը և Երևանի գեղեցիկ փողոցներից մեկը:*

*Սովորե՛ք «Նանիկ ասեմ բալիկիս» ժողովրդական երգը:*

Սովորիր

Երգիր

## ՆԱՆԻԿ ԱՍԵՄ ԲԱԼԻԿԻՍ



**Նանիկ ասեմ բալիկիս,**
**Քունը տանի ջանիկիս,**
**Նանա՛, գառնո՛ւկս, նանա՛,**
**Երգեմ, որ շուտ մեծանա:**

**Տոտիկ-տոտիկ դու ման գաս,**
**Օրոր-շորոր դու պար գաս:**
**Դե՛, շուտ քնի՛ր, իմ բալա՛ս,**
**Քնի՛ր, որ շուտ մեծանաս:**

## *Ճանաչե՛ք և հիշե՛ք*



***Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ (1756–1791)***

*Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը ավստրիացի կոմպոզիտոր է: Նա ունեցել է երաժշտական բացառիկ ընդունակություններ: Չորս տարեկանից նվագել է կլավեսին (դաշնամուր), ապա՝ ջութակ և երգեհոն: Հինգ–վեց տարեկանից արդեն ստեղծագործել է և համերգներ տվել:*

*Նա գրել է բազմաթիվ օպերաներ, սիմֆոնիաներ և շատ ուրիշ երաժշտական ստեղծագործություններ: Դուք դեռ շատ առիթներ կունենաք լսելու նրա հրաշալի ստեղծագործությունները:*

Ձեր ունկնդրած քայլերգերը, պարերը և երգերը ունեն տարբեր արագություն: Դրանք մեկ հնչում են դանդաղ, մեկ՝ քայլքի նման միջին արագությամբ, մեկ էլ՝ վազքի նման արագ:

| | | |
|---|---|---|
|  *դանդաղ* |  *միջին* |  *արագ* |

Երաժշտության մեջ այդ դանդաղ, միջին և արագ շարժումներն անվանում են ***տեմպ:***



*Ծափով ցո՛ւյց տվեք ձեր սովորած քայլերգի, պարերգի և երգի զարկերը:*

# ԵՐԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ունկնդրենք կոմպոզիտորներ Լյուդվիգ վան Բեթհովենի «Արջամուկ», Արամ Խաչատրյանի «Օրորոցային» և հայկական ժողովրդական «Գացե՛ք տեսեք» երգերը:

Ի՞նչ տպավորություն դուք ստացաք՝ լսելով այդ ստեղծագործությունները:

***Ճանաչե՛ք և հիշե՛ք***



***Արամ Խաչատրյան (1903–1978)***

*Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը ստեղծել է բազմաթիվ երաժշտական ստեղծագործություններ, որոնք կատարվում են թե՛ մեր հայրենիքում, թե՛ ողջ աշխարհում: Դրանք սիրելի են համայն մարդկության համար:*



## Հիշե՛ք

Մանուկների ձայնի տեսակը անվանում են ***սոպրանո*** կամ ***դիսկանտ***: Տղամարդու ամենաթավ ձայնն անվանում են ***բաս***:

Կռահե՛ք, թե որ նկարը որ ձայնի տեսակին է համապատասխանում:

Սովորիր

*Սովորե՛ք «Գացե՛ք տեսե՛ք» ժողովրդական երգը:*

## ԳԱՑԵՔ ՏԵՍԵՔ





– Գացե՛ք տեսե՛ք՝ ո՛վ ա կերել էծը:
Գացին տեսան՝ գելն ա կերել էծը:
Գելն ու էծը,
Էծն ու գելը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
– Գացե՛ք տեսե՛ք՝ ո՛վ ա կերել գելը:
Գացին տեսան՝ արջն ա կերել գելը:
Արջն ու գելը,
Գելն ու էծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
– Գացե՛ք տեսե՛ք՝ ո՛վ ա կերել արջը:
Գացին տեսան՝ Թուրն ա կերել արջը:
Թուրն ու արջը,
Արջն ու գելը,
Գելն ու էծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:



Դուք զգացիք, որ այս երգը ***կատակերգ է:*** Հայկական ժողովրդական երգերի մեջ կատակերգերը մեծ տարածում ունեն, դրանք հնչում են ժողովրդական տոների ժամանակ:

*Փորձե՛ք երգի ռիթմը գրել նոտաներով, ապա երգե՛ք ռիթմի վանկերով:*



Դուք գիտեք, որ երաժշտական հնչյուններն ունենում են ոչ միայն կարճ և երկար տևողություններ, այլև տարբեր բարձրություններ:

## ***Ինչպես են գրառում երաժշտական հնչյունների բարձրությունը***

Դուք ծանոթ եք ***նոտա*** նշանին: Նոտաների օգնությամբ գրի ենք առնում ոչ միայն երաժշտական հնչյունների տևողու-թյունները, այլև հնչյունների բարձրությունները, որոնք գրվում են ***հնգագծի*** կամ ***նոտագծի*** ցածր, միջին և բարձր գծերի վրա կամ գծարանքներում:

*Նոտագիծը գրվում է այսպես.*




*Նոտաները գրվում են գծերի վրա և գծարանքներում.*



*Որքան հնչյունը բարձր է, այնքան նոտան բարձր դիրք է զբաղեցնում նոտագծի վրա:*




Երաժշտական հնչյունների բարձրությունների նշանակման համար կիրառվում են վանկային անվանումներ: Ահա դրանք.

***դո, ռե, մի, ֆա, սո, լա, սի***

Գրված նոտաները իրենց վանկային անունները ստանում են միայն այն ժամանակ, երբ հնգագծի սկզբում դրվում է հատուկ նշան, որը կոչվում է ***բանալի:*** Նոտագրության մեջ օգտագործվում են մի շարք բանալիներ, որոնցից մենք կծանոթանանք ***սո*** բանալիին:

*Այն գրվում է այսպես.*



Քանի որ ***սո*** բանալիի վերջավորությունը փաթաթվում է հնգագծի երկրորդ գծին, դա ցույց է տալիս, որ երկրորդ գծի վրա գրվում է ***սո*** նոտան: Մյուս նոտաների տեղը որոշվում է ***սո*** նոտայի համեմատությամբ, օրինակ՝ ***սո***–ից ներքև տեղադրված ***ֆա***–ն գրվում է առաջին և երկրորդ գծերի միջև, իսկ ***մի***–ն՝ առաջին գծի վրա և այլն:




Եթե «Գացե՛ք տեսեք» երգի ***մեղեդին*** հնգագծի վրա գրենք նոտաներով, այն կունենա այսպիսի տեսք.




***Մեղեդին երգի երաժշտությունն է առանց խոսքի:***

Ինչպես նկատեցիք, երգի մեղեդին հնգագծի վրա գրված է տարբեր տևողության նոտաներով: Արագ տևողության նոտաները գրվում են այսպես՝ ♫՝ իրար միացած գծիկով: Այն երգում ենք ***թի–թի*** վանկերով: Դանդաղ տևողության նոտան գրվում է այսպես՝ ♩, և երգում ենք ***թա*** վանկով: Իսկ ավելի երկար տևողության նոտան գրվում է մեջը դատարկ կլորակով և գծիկով՝ 𝅗𝅥, երգում ենք երկարածիգ՝ ***թա–ա*** վանկով՝ ♩ + ♩ = 𝅗𝅥 :
*թա + թա թա–ա*

Ինչպես նկատեցիք, ***մի, ֆա, սո*** հնչյունները գրված են տարբեր տևողության նոտաներով: Փորձե՛ք այն երգել դանդաղ և ավելի դանդաղ տևողության ռիթմի վանկերով՝ ***թա–ա:***




Տեմպը գրվում է հնգագծի սկզբում՝ ***դանդաղ, միջին*** և ***արագ*** բառերով:

## ՀԱՎԻ ՃԻՎ

***(խաղ–երգ)***




Նկատեցիք, որ «***թի թի***» տևողության նոտաները գրվում են նաև առանձին–առանձին՝ դրոշակով:

Մեղեդու հնչյունների բարձրությունը երգում ենք նաև ***մի, ֆա, սո*** ձեռքի նշաններով:



***մի*** ***ֆա*** ***սո***

Փորձե՛ք ***մի, ֆա, սո*** ձայնաստիճանները երգել ձեռքի նշաններով:



# ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵՆ ԳԱԼԻՍ ՄԻԱՍԻՆ

Ունկնդրենք Ռոմանոս Մելիքյանի «Մանուկն ու ջուրը» և Արամ Խաչատրյանի «Վարդագույն աղջիկների պարը» ստեղծագործությունները:

Երաժշտության մեջ շատ հաճախ քայլերգը, երգը և պարը հանդես են գալիս միասին:

Փորձե՛ք որոշել, թե ձեր լսած ստեղծագործությունները երաժշտության որ տեսակին են պատկանում:

Սովորիր
Երգիր
Քայլիր
Պարիր

*Սովորե՛ք «Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն, աշուն է» երգը:*

## ՋԱ՜Ն, ՋԱ՜Ն, ՋԱ՜Ն, ԱՇՈՒՆ Է

*Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն, աշուն է,*
*Տե՛ս, տե՛ս, տե՛ս, նախշուն է,*
*Անուշ մրգեր ուտելու,*
*Նա մեզ այգի է կանչում:*

*Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն, աշուն է,*
*Տե՛ս, տե՛ս, տե՛ս, նախշուն է,*
*Նուռ, սերկևիլ ուտելու,*
*Նա մեզ այգի է կանչում:*

*Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն, աշուն է,*
*Տե՛ս, տե՛ս, տե՛ս, նախշուն է,*
*Տղա-աղջիկ շարքերով,*
*Նա մեզ դպրոց է կանչում:*

«Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն, աշուն է» երգը կատարել որպես քայլերգ և պարերգ:

Սովորիր
Երգիր
Քայլիր
Նվագիր

*Սովորե՛ք «Ջա՜ն գառնուկ» ժողովրդական երգը։*

## ՋԱ՜Ն ԳԱՌՆՈՒԿ



Կապեմ վզիդ զիլ զանգակ,
Դե՛, զնգը, զնգը, զնգը, ջա՜ն գառնուկ,
Օրը տաք է, արեգակ,
Դե՛, զնգը, զնգը, զնգը, ջա՜ն գառնուկ։

Արտի բոլոր՝ կանաչ խոտ,
Իմ սիրո՜ւն գառնուկ,
Արի՛ տանեմ քեզ արոտ,
Իմ սիրո՜ւն գառնուկ։

Տանեմ արոտ՝ կշտանաս,
Դե՛, զնգը, զնգը, զնգը, ջա՜ն գառնուկ,
Խոտ ուտես, շուտ մեծանաս,
Դե՛, զնգը, զնգը, զնգը, ջա՜ն գառնուկ։

Կանաչ դաշտի մեջ խաղաս,
Իմ սիրո՜ւն գառնուկ,
Երեկոյան տուն դառնաս,
Իմ սիրո՜ւն գառնուկ։

Ինչպե՞ս պետք է երգել, որ «Ջա՜ն գառնուկ» երգը մեկ հնչի որպես քայլերգ, մեկ՝ որպես պարերգ։

*Երգը կատարե՛ք ռիթմական նվագակցությամբ։*



Ռիթմի նվագակցությունը կրկնելու համար դրվում է կրկնության նշան՝ ***երկու կետ*** (**:**)։

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ



*Տրված ռիթմով փորձե՛ք ճանաչել երգը:*

*Ուսուցչի ռիթմական հարցին (ծափերին) պատասխանե՛ք ռիթմի վանկային անուններով:*

*Ուսուցիչ*





*Աշակերտ*

*թա, թա, թի-թի, թա*

*թի-թի, թի-թի, թի-թի, թա*

*թի-թի, թի-թի, թա-ա,*

## Երաժշտական արձագանք



*Կանչ*

*Երգե՛ք և ցուցադրե՛ք ձեռքի նշաններով:*








## *Խաչբառ*

*Լրացրե՛ք խաչբառը՝ պատասխանելով հետևյալ հարցերին:*

*Ձախից աջ*

1. Տղամարդու ամենաթավ ձայնը:
6. Ձայնաստիճանի անվանում:
7. Ավստրիացի հանրահայտ կոմպոզիտոր:
8. Ձայնաստիճանի անվանում:
9. Երաժշտության ընթացքի արագություն:
11. Ձայնաստիճանի անվանում:
13. Երաժշտության տեսակ:

*Վերևից ներքև*

2. Ձայնաստիճանի անվանում:
3. Հայ կոմպոզիտոր:
4. Երաժշտական հնչյունների գրառման նշան:
5. Իրար հաջորդող տևողությունների փոխհարաբերությունը:
10. Երաժշտության տեսակ:
12. Երկու շեշտերի միջև ընկած հատվածը:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | | 2 | | | | 5 |
| | | | | 4 | | |
| | 3 | | | | | |
| 6 | | | | | | |
| | 7 | | | | | 12 |
| 8 | | | | | | |
| | 9 | | | 10 | | |
| 11 | | | | | | |
| | | | 13 | | | |

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Տողի սկզբում եմ դրվում,
Խխունջի պես ոլորվում,
Սոլ–ի տեղն եմ ցույց տալիս,
Իմ անունն է .........

Ես մի նշան եմ կլոր,
Իմ մեջ ձայներն են բոլոր:
Եթե մի քիչ մտածես,
Կիմանաս, թե ով եմ ես:

# ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ՊԱՏՄՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ունկնդրենք կոմպոզիտոր Լյուդվիգ վան Բեթհովենի «Ուրախ, տխուր» ստեղծագործությունը:

## *Ճանաչե՛ք և հիշե՛ք*



***Լյուդվիգ վան Բեթհովեն (1770–1827)***

*Գերմանացի կոմպոզիտոր Լյուդվիգ վան Բեթհովենը ապրել և ստեղծագործել է մեզնից ավելի քան երկու հարյուր հիսուն տարի առաջ, սակայն նրա ստեղծագործությունները մեր օրերում էլ ունկնդրում ենք մեծ հետաքրքրությամբ: Նա սիրված է աշխարհի բոլոր ժողովուրդների կողմից:*

Դուք հավանաբար զգացիք, որ երաժշտության մի մասը ձեր մեջ արթնացնում է ուրախ տրամադրություն, իսկ մյուս մասը՝ տխուր:

Երաժշտության միջոցով հնարավոր է արտահայտել տարբեր զգացմունքներ՝ ուրախություն, տխրություն, ինչպես նաև բնության երևույթներ՝ ամպրոպ, անձրև, քամի և այլն: Այս ամենը արտահայտելու և նկարագրելու համար կոմպոզիտորն օգտագործում է մի շարք երաժշտական արտահայտչամիջոցներ:

Դրանցից են հնչյունների կարճ և երկար տևողությունները, հնչողության բարձրությունը՝ *բարձր, ցածր*, ուժգնությունը՝ *ուժեղ, մեղմ*, տեմպը՝ *դանդաղ, արագ*, երաժշտական դադարները (պաուզաները) և այլն:

Եթե ուշադրությամբ լսեք երաժշտական ստեղծագործությունները, ինքներդ կկարողանաք կռահել, թե այդ արտահայտչական միջոցներից որոնք են կիրառվել տվյալ ստեղծագործության մեջ:



***Մարտին Մազմանյան***
***(1899–1987)***

*Հայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ Մարտին Մազմանյանը գրել է սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններ, խմբերգեր ռոմանսներ, երգեր մանուկների համար։*

*Նա բանաստեղծ Հակոբ Աղաբաբի բառերով գրել է «Ճուտիկ» մանկական օպերան, որը նախատեսված է երեխաների կատարման համար։ Եվ պատահական չէ, որ 2-րդ դասարանցիները, լսելով օպերայի երաժշտությունը, կատարելով երգերը, պարերը, քայլերգերը, ծանոթանում են օպերայի տեսակին։*

Սովորի՛ր
Երգի՛ր

*Սովորե՛ք «Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը»։*

Երգը այն մասին է, թե ինչպես են աքլորիկը, թուխսը և ճուտիկները գտնում կորած ճուտիկին։

## ԱՔԼՈՐԻԿԻ, ԹԽՍԻ ԵՎ ՃՈՒՏԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Աքլորիկ – Ա՜յ էստեղ է
Ճուտ Մարին՝
Ապավինած
Չամբարին։

Թուխս – Բարո՜վ, բարո՜վ,
Ճուտի՛կ ջան։

Ճուտիկներ – Բարո՜վ, բարո՜վ,
Քուրի՛կ ջան։



Միասին – Ո՜ւր գնացիր՝
Հետ չեկար,
Էդ ի՞նչ օրի
Դու ընկար։

*Այս երգը կարելի է կատարել մենակ, խմբով, նաև դերերով։*

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ Է ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐ

Ունկնդրենք կոմպոզիտոր Դմիտրի Կաբալևսկու «Երեք ընկերուհիներ» ստեղծագործությունը:

*Ծանաչե՛ք և հիշե՛ք*



***Դմիտրի Կաբալևսկի***
***(1904–1987)***

*Ռուս կոմպոզիտոր Դմիտրի Կաբալևսկին շատ ստեղծագործություններ է նվիրել մանուկներին, որոնք մեծ սիրով են կատարվում և մեծ ընդունելության են արժանանում տարբեր երկրների երեխաների կողմից:*

Կոմպոզիտոր Դմիտրի Կաբալևսկին երաժշտության միջոցով ստեղծում է տարբեր բնավորություն ունեցող երեք ընկերուհիների կերպարները:
Դուք ինչպե՞ս կբնութագրեք երեք ընկերուհիներին:
Փորձե՛ք երաժշտությունից ստացած ձեր տպավորություններն արտահայտել նաև դեմքի և մարմնի համապատասխան շարժումներով:

Երաժշտության ի՞նչ արտահայտչամիջոցներ է օգտագործել կոմպոզիտորը «Երեք ընկերուհիներին» բնութագրելու համար:

Սովորի՛ր «Во поле берёза стояла» ռուսական ժողովրդական երգը:

Սովորիր

Երգիր

## ВО ПОЛЕ БЕРЁЗА СТОЯЛА

*Во поле берёза стояла,*
*Во поле кудрявая стояла,*
*Люли, люли, стояла,*
*Люли, люли, стояла.*

*Я пойду, пойду погуляю,*
*Белую берёзку заломаю,*
*Люли, люли, заломаю,*
*Люли, люли, заломаю.*

*Срежу я с берёзы три пруточка,*
*Сделаю себе я три гудочка,*
*Люли, люли, три гудочка,*
*Люли, люли, три гудочка.*

*Ստեղծե՛ք ռիթմական նվագակցություն և նվագակցե՛ք երգին:*
*Երգելիս շարժումներով արտահայտե՛ք երգի տրամադրությունը:*



# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է

Ունկնդրենք կոմպոզիտորներ Գեղունի Չթչյանի «Անձրև» և Արեգ Լուսինյանի «Հեծանվորդը» ստեղծագործությունները:

*Փորձե՛ք պատկերացնել, թե ինչ են նկարագրում ձեր լսած ստեղծագործությունները, պատմե՛ք ձեր տպավորությունները:*

Սովորիր

Երգիր



## ՎԱԽԿՈՏ ԿԱՏՈՒՆ

*Փիսոն մլավան*
*Մուկ է որոնում,*
*Դրսում մուկ չկա,*
*Կա մութ մառանում:*

*Վախկոտ մեր կատուն*
*Մառան չի մտնում,*
*Նա մութ տեղերից*
*Շատ է վախենում:*

*Գնամ ու վառեմ*
*Լույսը մառանի,*
*Փիսոն թող գա ներս,*
*Որ մկներ բռնի:*

«Վախկոտ կատուն» երգի մեղեդու հնչյունները բաղկացած են ***ռե, մի, ֆա*** ձայնաստիճաններից: Հնգագծի վրա այն կունենա այսպիսի տեսք.




***Ռե*** ձայնաստիճանի ձեռքի նշանը ցույց է տրվում այսպես.



Երգիր Երգե՛ք նոտաներով ու ձեռքի նշաններով:

*Եթե «Վախկոտ կատուն» երգի մեղեդին գրենք նոտաներով և ձեռքի նշաններով, կունենա այսպիսի տեսք:*







Ինչպես տեսաք, «Վախկոտ կատուն» երգի յուրաքանչյուր տակտ ունի երկու զարկ, այսինքն՝ երկու մաս: Դա նշանակում է, որ երգն ունի երկմաս ***չափ:***

***Չափը*** գրվում է ***2*** թվանշանով, «սոլ» բանալիից հետո:

*Երգե՛ք նոտաներով:*







ԳԱՐՈՒՆ



*Սովորե՛ք «Վարդավառ» ժողովրդական երգը:*

## ՎԱՐԴԱՎԱՌ

Շուշան, նարգիզ, մեխակ ու վարդ
Օրորվում են մեր սարում,
Աղջիկ-տղա խմբով ուրախ
Երգ են ասում ու պարում:

Ամռան շոգին արևը վառ
Շողշողում է երկնքում,
Աղջիկ-տղա իրար վրա
Ջուր են ցողում, ծիծաղում:



*Փորձե՛ք երգի մեղեդու ռիթմը գրել նոտաներով՝ նշելով նաև ձայնաստիճանների վանկային անունները:*




*Այժմ «Վարդավառ» երգը գրե՛ք նոտաներով հնգագծի վրա և երգե՛ք:*



*Սովորե՛ք «Արջի վիշտը» երգը:*

## ԱՐՋԻ ՎԻՇՏԸ

*Մի օր արջը լընգին-լընգին,*
*Կոպալ դունչը ծնկին-ծնկին,*
*Ճամփեն՝ ոլոր, սիրտը՝ մոլոր,*
*Արտասվում էր հոնգուր-հոնգուր:*

*— Դու ո՞ւր կորար, ա՜յ իմ քոթոթ,—*
*Արտասվում էր արջը բրդոտ,—*
*Քեզ փնտրեցի երկիր բոլոր,*
*Բայց չգտա, օրոր-մորոր:*



Զգացի՞ք, որ երգը արտահայտում է ոչ միայն արջի հուզմունքը, ապրումները, այլև նկարագրում է նրա ծանր շարժումները:

Հիշե՛ք, որ երգի մեկ շնչով կատարվող հատվածը անվանում ենք ***ֆրազ:***
Եթե «Արջի վիշտը» երգի մեղեդու ռիթմը գրենք նոտաներով և բաժանենք ֆրազների, դրանք կունենան այսպիսի տեսք.

*Ֆրազ* *Ֆրազ*



*Մի օր ար - ջը լըն - գին - լըն - գին*

Ֆրազները բաժանվում են ավելի փոքր մասերի, որոնք կոչվում են ***մոտիվներ:***

*Մոտիվ* *Մոտիվ*



*Մի օր ար - ջը լըն - գին - լըն - գին*

Դուք նկատեցիք, որ երկու նոտաները միացված են կոր գծով: Այն կոչվում է ***լիգա:***
Լիգայով միացված նոտաները պետք է երգել մեկ վանկով:

Սովորիր

Երգիր

Պարիր

## Գալիս է Նոր տարին՝ բոլորիս սիրելի տոնը

*Սովորե՛ք «Նոր տարի» երգը:*

### ՆՈՐ ՏԱՐԻ




Դե արի՛, շո՛ւտ արի,
Գա՛լդ բարի, Նո՛ր տարի,
Բերքդ թող առատ լինի,
Տունն էլ ջերմ, խաղաղ լինի,
Դե արի՛, շո՛ւտ արի,
Գա՛լդ բարի, Նո՛ր տարի:

Դե արի՛, շո՛ւտ արի,
Գա՛լդ բարի, Նոր տարի:
Մենք սիրով քեզ ենք սպասում,
Ուրա՛խ, զվա՛րթ Նոր տարի,
Դե արի՛, շո՛ւտ արի,
Գա՛լդ բարի, Նո՛ր տարի:

Դե արի՛, շո՛ւտ արի,
Գա՛լդ բարի, Նո՛ր տարի,
Լույս ու խինդ ես դու բերում,
Մենք քեզ շատ–շատ ենք սիրում:
Դե արի՛, շո՛ւտ արի,
Գա՛լդ բարի, Նո՛ր տարի:

Սովորի՛ր
Երգի՛ր
Պարի՛ր

*Սովորե՛ք «Մանուկներն ու Ձմեռ պապին» երգը:*

## ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՁՄԵՌ ՊԱՊԻՆ

Մանուկներ – Այսօր վաղ ենք արթնացել,
Հագել–կապել, լվացվել,
Ձմեռ պապի ալեհեր,
Ի՞նչ ես բերել մեզ նվեր: } 2 անգամ

Ձմեռ պապի – Բերել եմ ձեզ երգ ու գիրք,
Հազար բարիք, հազար միրգ,
Ուրախացեք ու պարեք,
Մեր աշխարհը զարդարեք: } 2 անգամ



Սովորիր

Երգիր

Պարիր

*Սովորե՛ք «Ёлочка» ռուսական երգը:*

## Ёлочка

*Маленькой ёлочке*
*Холодно зимой,*
*Из лесу ёлочку*
*Взяли мы домой.*

*Бусы повесили,*
*Стали в хоровод,*
*Весело, весело*
*Встретим Новый год!*



*Խմբով երգե՛ք այս երգը ու պարե՛ք տոնածառի շուրջը:*

*Մեկ տողի վրա նոտաներով փորձե՛ք գրել երգի ռիթմը և երգե՛ք ռիթմի վանկերով (թա, թի–թի):*



## *Ամփոփիչ հարցեր*

*Փորձե՛ք պատասխանել հարցերին:*

1. Երաժշտության ո՞ր տեսակներին եք դուք ծանոթ:

2. Ի՞նչ է նշանակում ***մեղեդի:***

3. Ինչպե՞ս ենք գրառում երաժշտության հնչյունները:

4. Ի՞նչ է ցույց տալիս ***սո*** բանալին:

5. Ովքե՞ր են ստեղծում երաժշտական ստեղծագործությունները:

6. Ի՞նչ է ***տեմպը***:

7. Երաժշտության մեջ ի՞նչն են անվանում ***ֆրազ:***

8. Երաժշտական ի՞նչ արտահայտչամիջոցներ գիտեք:

9. Ի՞նչ են անվանում երաժշտության դանդաղ և արագ ընթացքը, շարժումը:

10. Ի՞նչ է ***ռիթմը:***

11. Ասա՛ քեզ հայտնի 3–4 կոմպոզիտորների անուններ:

12. Քո սովորած երգերից ո՞րն է քեզ բոլորից շատ դուր եկել. կարո՞ղ ես ասել՝ ինչու:

# Երաժշտական ժամանց

## Երաժշտական խաչբառ



Ուշադիր կարդացեք խաչբառի պահանջները և փորձեք լրացնել վանդակները՝ նախօրոք արտագծելով ձեր վանդակավոր տետրում:

*Ձախից աջ*

4. Հայ մեծ կոմպոզիտոր:
6. Մեկ շնչով կատարվող երգի հատված:
7. Ձայնաստիճանի անվանում:
9. Նոտաներն իրար միացնող կիսակոր գիծ:
10. Ձայնաստիճանի անվանում:

*Վերևից ներքև*

1. Երաժշտության տեսակ:
2. Հնգագծի սկզբում դրվող նշան, որը ցույց է տալիս ***ու*** նոտայի տեղը:
3. Ձայնաստիճանի անվանում:
5. Հնչյունի գրառման նշան:
8. Երգչային թավ ձայն:

## Երաժշտական խաղ

*Ուսուցիչ*
*Հարց*



*Աշակերտը*
*Պատասխան*

## *Երաժշտական արձագանք*



Կանչ

*Երգեք և ցուցադրեք ձեռքի նշաններով:*









***Ֆրազ, մեղեդի, տակտ, լիգա, սոպրանո, զարկ, նոտա, ռիթմ, հնչյուն, բանալի, տեմպ, բաս:***

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | 2 ն | | | | | | |
| | | 1 | | | 2 գ | | | | | | |
| | | 1 | | | 2 մ | | | | | | |
| | | 1 | | | 2 պ | | | | | | |
| | | | 1 | | 2 ս | | | | | | |
| | 1 | | | | 2 լի | | | | | | |

Լրացրեք դատարկ վանդակները և կունենաք ձեզ ծանոթ կոմպոզիտորների անունները:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մ | | | Ա | | Տ | |
| | Բ | | | Հ | | | | Ն |
| | | Կ | | | | Տ | | Ս |
| Խ | | Չ | | | Ր | | | Ն |

# ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ ԵՐԳԸ, ՊԱՐԸ, ՔԱՅԼԵՐԳԸ

Ունկնդրենք «Աքլորիկի, թխսի և ճուտիկների» երգը Մարտին Մազմանյանի «Ճուտիկ» օպերայից՝ սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ:

Եթե երաժշտություն լսելիս դուք կարողանաք տարբերել երգը, պարը, քայլերգը, ապա ձեր առջև կբացվեն օպերա, բալետ և սիմֆոնիկ համերգներ ունկնդրելու դռները:

***Օպերան*** երաժշտական ներկայացում է, որտեղ կատարողները իրար հետ ոչ թե խոսում են, այլ երգում: Այնտեղ հանդես են գալիս երգիչները, երգչախումբը և սիմֆոնիկ նվագախումբը:

Ձեր սովորած «Աքլորիկի, թխսի և ճուտիկների» երգը «Ճուտիկ» մանկական օպերայից է, որը գրել են բանաստեղծ Հակոբ Աղաբաբը և կոմպոզիտոր Մարտին Մազմանյանը: Դուք նո՛ւյնպես մասնակցեք օպերայում հնչող «Աքլորիկի, թխսի և ճուտիկների» երգի կատարմանը:



*Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը*

Ունկնդրենք Արամ Խաչատրյանի արդեն ձեզ ծանոթ «Աղջիկների պարը» «Գայանե» բալետից՝ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ:

Ի՞նչ տրամադրություն ձեր մեջ արթնացրեց ունկնդրած երաժշտությունը: Ձեր կարծիքով ի՞նչ է նկարագրում այս երաժշտությունը:

***Բալետը*** նույնպես երաժշտական ներկայացում է, որտեղ դերակատարները իրար հետ «խոսում են» պարային շարժումների միջոցով, որին նվագակցում է սիմֆոնիկ նվագախումբը:

*«Աղջիկների պարից» ստացած ձեր տպավորությունները վերարտադրե՛ք պարային շարժումներով:*

*«Աղջիկների պարը» «Գայանե» բալետից*



Երգն ու պարը օգնեցին մեզ ծանոթանալու օպերային և բալետին: Այժմ մենք կծանոթանանք սիմֆոնիային:

Ունկնդրենք կոմպոզիտոր Էմմա Միհրանյանի «Պատանեկան» սիմֆոնիայից մի հատված:

Կան ծավալուն երաժշտական ստեղծագործություններ, որոնք կատարվում են մեծ նվագախմբով: Այդպիսի ստեղծագործությունները մենք անվանում ենք ***սիմֆոնիա***, իսկ նվագախումբը՝ ***սիմֆոնիկ*** նվագախումբ: Այն ղեկավարում է դիրիժորը, որին անվանում են նաև նվագավար:

Կոմպոզիտորները հաճախ իրենց ստեղծագործություններում օգտագործում են ժողովրդական երգեր և պարեր, որոնք ժողովրդին սիրելի են և հարազատ:

Կռահե՛ք, թե ինչ հայկական ժողովրդական երգ է հնչում սիմֆոնիայում: Ինչպիսի՞ փոփոխության է այն ենթարկվել սիմֆոնիայում:

Երգիր

*Վերհիշե՛ք և երգե՛ք «Արև՛, արև՛» երգը:*

### ԱՐԵՎ, ԱՐԵՎ

*Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ,*
*Ջիգի քարին վե՛ր եկ,*

*Սև-սև ամպե՛ր, Հեռացե՛ք,*
*Արևին ճամփա՛ տվե՛ք:*



*Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը*

*Վերհիշեք և երգեք «Շվի» հայկական ժողովրդական երգը:*




Սովորիր

Երգիր

Հորինիր

*Ծափ տվեք «Շվի» երգի մեղեդու ռիթմը և երգեք ձայնաստիճանների վանկային անուններով:*




«Շվի» երգի մեղեդու ամենացածր ձայնաստիճանը ***դո***–ն է. այն գրվում է հնգագծից ներքև՝ առաջին օժանդակ գծիկի վրա:




***Դո*** ձայնաստիճանի ձեռքի նշանը ցուցադրվում է այսպես.



*Երգեք նոտաներով և ցո՛ւյց տվեք ձեռքի նշաններով:*




## ՍԱԳԻԿ



# ԵՐԳԸ ՕՊԵՐԱՅՈՒՄ, ԲԱԼԵՏՈՒՄ

Ունկնդրենք կոմպոզիտոր Մարտին Մազմանյանի «Ճուտիկ» օպերայից «Թխսի և կատվի կռիվը» երգը, Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից՝ «Օրորոցային» մեղեդին:

Ինչպես նկատեցիք, բալետում երգը հնչում է առանց խոսքի՝ որպես ***մեղեդի:***

*Սովորե՛ք «Թխսի և կատվի կռիվը» երգը ձեզ արդեն ծանոթ «Ճուտիկ» օպերայից:*

Մի՛ երգեք շատ ուժգին, այլ երգե՛ք թեթև, գեղեցիկ ձայնով: Բառերը արտասանե՛ք պարզ: Ձայնավորները երկարաձգե՛ք, իսկ բաղաձայնները արտասանե՛ք հստակ: Բառի կեսից շունչ մի՛ վերցրեք:

Սովորիր

Երգիր

### ԹԽՍԻ ԵՎ ԿԱՏՎԻ ԿՌԻՎԸ

*Թուխս —* Կատո՛ւ, Հեռո՛ւ, տո՛ւր կտամ,
Աչքիդ լույսը փուլ կտամ:
*Կատու —* Ա՛յ Թուխս, փախի՛ր, որ բռնեմ,
Փետուրներդ կպոկեմ:

*Թուխս —* Կատո՛ւ, ճանկդ քե՛զ քաշի,
Իզուր սիրտդ մի՛ մաշի:
*Կատու —* Խրատ ունես՝ քե՛զ ասա,
Թե չէ՝ էս է, քեզ հասա:

*Թուխս —* Կատո՛ւ, կորի՛, դու ո՞վ ես,
Մի՛ ցատկոտի գժի պես:
*Կատու —* Մի տե՛ս, մի տե՛ս, սրա՛ն տես,
Ես քեզ կանեմ երկու կես:



*Փորձե՛ք այս երգը կատարել դերերով:*

Իմացե՛ք, որ այս երգի մեղեդին հիմնականում ծավալվում է ***դո–ռե–մի–ֆա–սո*** հնչյունաշարում: Եթե ձեր իմացած ***դո–ռե–մի***, ***ռե–մի–ֆա*** և ***մի–ֆա–սո*** եռաստիճան հնչյունաշարերը երգենք միասին՝ ըստ հնչյունների հաջորդական կարգի, կստանանք հինգ ձայնաստիճան պարունակող ***դո–ռե–մի–ֆա–սո*** հնչյունաշարը:

*Փորձե՛ք հնչյունաշարերը երգել ձեռքի նշաններով:*





# ԵՐԳԸ ՍԻՄՖՈՆԻԱՅՈՒՄ

Ունկնդրենք հատվածներ Պյոտր Չայկովսկու և Էդվարդ Միրզոյանի սիմֆոնիաներից:

***Ճանաչե՛ք և հիշե՛ք***



***Պյոտր Չայկովսկի***
***(1840–1893)***

*Ռուս մեծ կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկին գրել է ստեղծագործություններ երաժշտական գրեթե բոլոր ժանրերում՝ օպերա, բալետ, սիմֆոնիա, կոնցերտներ տարբեր նվագարանների համար, ինչպես նաև երաժշտություն մանուկների համար: Նրա երաժշտությունը սիրել են թե՛ փոքրիկները, թե՛ մեծերը: Նա մեծ համբավ է վայելում ողջ աշխարհում:*

Ուշադիր ունկնդրելով այս ստեղծագործությունները՝ դուք կզգաք, որ դրանց մեջ հնչում են երգերի մեղեդիներ, որոնք ձեզ ծանոթ են:

Արդյոք զգացի՞ք, որ Պ. Չայկովսկու չորրորդ սիմֆոնիայում հնչեց «Во поле берёза стояла» երգը: Իսկ Էդվարդ Միրզոյանի սիմֆոնիայում հնչեց «Քեռին եկավ մեր բակը» երգը:

Ասացե՛ք՝ ինչ փոփոխության են ենթարկվել երգերը սիմֆոնիայում:

*Ձեր շրջապատում հնչող սիմֆոնիկ երաժշտության մեջ փնտրե՛ք ձեզ ծանոթ մեղեդիներ և երգե՛ք:*

Սովորիր
Երգիր
Պարիր

*Սովորե՛ք «Մայրիկիս» երգը:*

## ՄԱՅՐԻԿԻՍ

Գիտեմ, բարի են, բարի
Բոլոր մայրերն աշխարհի,
Բայց աշխարհում ինձ համար
Մի աշխարհ կա ու մի մայր: } 2 անգամ

Ո՞վ է ինձ կանչում, այն ո՛վ,
Մայրս՝ անուշ իր ձայնով:
Ո՞վ է ինձ ասում՝ ձագո՛ւկ,
Մայրս՝ շնչով իր տաքուկ: } 2 անգամ



*Մայրիկի նկատմամբ ունեցած ձեր զգացմունքներն արտահայտե՛ք երգով, պարով: Փորձե՛ք գրել երկտող, քառատող, ստեղծե՛ք մեղեդի, երգ և նվիրե՛ք մայրիկին:*

*Երգը կատարե՛ք մենակ կամ խմբով:*

*Երգի բովանդակությանը համապատասխան՝ սահուն շարժումնե՛ր կատարեք:*

# ՊԱՐԸ ԲԱԼԵՏՈՒՄ, ՕՊԵՐԱՅՈՒՄ, ՍԻՄՖՈՆԻԱՅՈՒՄ

Ունկնդրենք Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից «Վարդագույն աղջիկների պարը», պարերի շարքը երկրորդ սիմֆոնիայից և Մարտին Մազմանյանի «Կատվի պարերգը» «Ճուտիկ» օպերայից:

Ինչպես դուք զգացիք, պարերը լինում են ոչ միայն բալետում, այլև օպերայում և սիմֆոնիայում:

Դուք արդեն լսել եք «Օրորոցային» պարը «Գայանե» բալետից: Այն հնչում էր մեղմ, նուրբ՝ արտահայտելով մոր մեղմ և քնքուշ զգացմունքները, իսկ «Վարդագույն աղջիկների պարը» հնչում է աշխույժ, շարժուն, ուրախ: «Կատվի պարերգը» Մարտին Մազմանյանի «Ճուտիկ» օպերայում արտահայտում է կատվի խորամանկ, զգույշ և ճկուն շարժումները: Արամ Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիայում հայկական պարերի շարքը հնչում է մերթ ուրախ, մերթ նուրբ և թեթև նազանքով՝ արտահայտելով տարբեր տրամադրություններ:

Սովորիր

Երգիր

*Նոտաներով սովորեք «Անձրև, անձրև» երգը, որի մեղեդին բաղկացած է **դո–ռե–մի–ֆա–սոլ** ձայնատիճաններից:*

## ԱՆՁՐԵՎ, ԱՆՁՐԵՎ




*Օրը մթնել, ամպել ա,*
*Տես, երկինքը թխպել ա, մթնել ա,*
*Արտերի ցորեն հացը*
*Խշխշալով երգ ա ասում՝ Հասել ա:*

Ունկնդրենք «Սուսերով պարը» Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից, «Տղամարդկանց պարը» Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից և «Փոքրիկ կարապների պարը» Պյոտր Չայկովսկու «Կարապի լիճը» բալետից:

Սովորիր

Երգիր

Պարիր

Կարո՞ղ եք ասել, թե այդ պարերը ինչով են իրարից տարբերվում:

Պատմե՛ք երաժշտությունից ստացած ձեր տպավորությունները և ասացե՛ք, թե որ երաժշտությունը որ նկարին է համապատասխանում:





Սովորիր

Երգիր

Պարիր

*Սովորե՛ք «Հանի՛կ նայ» ժողովրդական երգը, որը նույնպես բաղկացած է «դո–ռե–մի–ֆա–սո» ձայնաստիճաններից:*

## ՀԱՆԻԿ ՆԱՅ

*Երկինքը ամպամած ա,*
*Հանի՛կ նայ, նանի՛կ նայ,*
*Մեր այգու դուռը բաց ա,*
*Հանի՛կ նայ, նանի՛կ նայ:*

*Երկնքից թոն ա գալի,*
*Հանի՛կ նայ, նանի՛կ նայ,*
*Անձրևից այգին թաց ա,*
*Հանի՛կ նայ, նանի՛կ նայ:*

*Այժմ «Հանի՛կ նայ» երգը երգե՛ք նոտաներով և չա՛փ տվե՛ք:*




Երկմաս չափը բախելու ժամանակ առաջին շեշտված մասում ձեռքը իջնում է ցած, չշեշտված մասում ձեռքը բարձրանում է վեր:



# ՔԱՅԼԵՐԳԸ ՕՊԵՐԱՅՈՒՄ, ԲԱԼԵՏՈՒՄ

Ունկնդրենք քայլերգեր Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից և Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից:

***Ճանաչե՛ք և հիշե՛ք***



***Ալեքսանդր Սպենդիարյան (1871–1928)***

*Ալեքսանդր Սպենդիարյանը բազմաթիվ երաժշտական ստեղծագործությունների հեղինակ է: Նա գրել է նաև «Ալմաստ» օպերան: 1933 թ. Երևանում այդ օպերայի բեմադրությամբ է բացվել օպերայի և բալետի պետական թատրոնը, որը կրում է Ալեքսանդր Սպենդիարյանի անունը: Նրա անունով կա երաժշտական դպրոց: Երևանում է նաև Ալ. Սպենդիարյանի տուն–թանգարանը:*

*Համեմատե՛ք ձեր լսած քայլերգերը, փորձե՛ք ասել՝ ինչով են դրանք տարբեր և ինչով են նման:*



Սովորի՛ր

Երգի՛ր

Քայլի՛ր

*Սովորե՛ք «Գովք Զամբարին» երգը «Ճուտիկ» մանկական օպերայից:*

## ԳՈՎՔ ԶԱՄԲԱՐԻՆ

*Ճուտիկ –* Շնորհակալ եմ Զամբարից,
Որ չար կատվից փրկեց ինձ:

*Խումբ –* Կեցցե՜, կեցցե՜, կեցցե՜,
Կեցցե՜ Զամբարը:
Խորտակում է միշտ չարը,
Նա՛ է, նա՛ է, նա՛ է
Ամեն մի բանում
Մեր բակվորին պաշտպանում:

*Երգը մեներգում է հիվանդ ճուտիկը, ապա երգում են բոլորը միասին:*



«Ճուտիկ» մանկական օպերան Մարտին Մազմանյանը գրել է երեխաների կատարման համար: Չնայած օպերայի հերոսները թռչուններ ու կենդանիներ են, սակայն նրանց վերագրված են մարդկային բնավորության գծեր, ինչը օպերայի երաժշտությունը դարձնում է հասկանալի և սիրելի:

# ՔԱՅԼԵՐԳԸ ՍԻՄՖՈՆԻԱՅՈՒՄ

Ունկնդրենք «Որսկան ախպեր» հայկական ժողովրդական երգը, ապա այդ երգը՝ Արամ Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիայից, և «Ուրախության ձոներգը»՝ Լյուդվիգ վան Բեթհովենի 9–րդ սիմֆոնիայից:

Սովորիր
Երգիր
Քայլիր

Դուք հավանաբար զգացիք, որ «Որսկան ախպեր» երգը սիմֆոնիայում հնչում է դանդաղ, թախծոտ, կարծես սգո քայլերգ լինի: Դրա կողքին «Ուրախության ձոներգը» հնչում է որպես հաղթական քայլերգ:

*Համեմատե՛ք ձեր լսած քայլերգերը և պատմե՛ք ձեր տպավորությունները:*



Դուք գիտեք, որ սիմֆոնիան նախատեսված է սիմֆոնիկ նվագախմբով կատարելու համար՝ առանց երգեցողության: Սակայն առաջին անգամ Բեթհովենն իր 9–րդ սիմֆոնիայում ընդգրկեց երգչախումբ և երգիչ–կատարողների:

# Երաժշտական ժամանց

Երգե՛ք ձեռքի նշաններով և կռահե՛ք, թե որ երգն է:



## Երաժշտական արձագանք



Կանչ

Երգե՛ք և ցուցադրե՛ք ձեռքի նշաններով:



դո ռե մի մի ռե դո

դո ռե մի ֆա սոլ

սոլ ֆա մի ռե մի ռե դո

դո ռե մի մի ռե դո

դո ռե մի ֆա սոլ

սոլ ֆա մի ռե մի ռե դո

Ուսուցչի ծափերի ռիթմը նոտագրե՛ք:

Ուսուցիչ

թա, թա, թի–թի, թա

թի–թի, թի–թի , թա, թա

թա, թի–թի, թի–թի, թա

թի–թի, թի–թի, թի–թի, թա



Աշակերտ



*Փորձե՛ք խոսքերի ռիթմը գրել նոտաներով.*

*Ամբողջ օրը քուն չունի...*




*Փորձե՛ք այդ ռիթմով հորինել մեղեդի:*

Լուսինենն հորինել է մի այսպիսի մեղեդի և երգել ձեռքի նշաններով .




*Ստեղծած մեղեդին գրե՛ք նոտաներով:*




*Շարունակե՛ք և ավարտե՛ք այս մեղեդին հետևյալ բառերով.*




*Փորձե՛ք գրված մեղեդին շարունակել և նոտաներով գրել հնգագծի վրա:*



# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՍՔ

Ունկնդրենք Լյուդվիգ վան Բեթհովենի «Արջամուկ» երգը և ֆրանսիացի կոմպոզիտոր Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայից «Տղաների քայլերգը»:

Սովորիր
Երգիր
Պարիր

Հիշո՞ւմ եք, թե ինչ են անվանում տղամարդու թավ ձայնը և մանկական բարձր ձայնը:

Ունկնդրելով այս ստեղծագործությունները՝ դուք զգացիք, որ «Արջամուկ» երգը կատարում էր թավ ձայն ունեցող տղամարդ երգիչ, իսկ «Տղաների քայլերգը» հնչեց մանուկների բարձր, զրնգուն ձայների կատարմամբ:

Ինչպես խոսակցական լեզուն, երաժշտությունը նույնպես ունի իր լեզուն: Այն բաղկացած է մասնիկներից՝ ***մոտիվ, ֆրազ, նախադասություն*** և այլն:

Երաժշտական խոսքի մեջ կարող է լինել մի քանի ֆրազ, ֆրազի մեջ՝ մի քանի մոտիվ և այլն: Այդ բոլորը կազմավորում են երաժշտական խոսքը՝ մեղեդին: Այն իր մեջ կրում է բոլոր այն արտահայտչական միջոցները, որոնց դուք արդեն ծանոթ եք՝ ***հնչյուն, տեմպ, ռիթմ, չափ, ուժգնություն, հնչյունի բարձրություն*** և այլն: Այս և այլ արտահայտչամիջոցների օգտագործմամբ է, որ կոմպոզիտորը կարողանում է ստեղծել տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործություններ: Այդ արտահայտչամիջոցների շնորհիվ մենք կարողանում ենք իրարից տարբերել երաժշտության ***տեսակները՝ երգերը, պարերը, քայլերգերը,*** և դրանք ընկալում ավելի մեծ երաժշտական ստեղծագործություններում՝ ***օպերայում, բալետում, սիմֆոնիայում:***

Ունկնդրենք կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի «Կլոր պար» և «Գարուն եկավ» երգերը:

## *Ճանաչե՛ք և հիշե՛ք*



***Ռոմանոս Մելիքյան***
***(1883–1935)***

*Ռոմանոս Մելիքյանը բազմաթիվ երգերի և ռոմանսների հեղինակ է: Նրա ստեղծագործությունները տոգորված են մարդկային խոր զգացմունքներով ու անսահման սիրով մարդկանց և բնության նկատմամբ: Նրա նուրբ քնարականությամբ ստեղծված երգերի շարքերը մեր երաժշտական գոհարներից են: Ռոմանոս Մելիքյանի անունն է կրում Երևանի երաժշտական ուսումնարաններից մեկը:*

*Ասացե՛ք, թե ձեր ունկնդրած երգերը երաժշտության որ տեսակին են պատկանում և ինչպիսի տրամադրություն են արտահայտում:*



*Սովորե՛ք «Գարուն եկավ» երգը:*

Սովորիր

### ԳԱՐՈՒՆ ԵԿԱՎ

**Գարուն եկավ, կանաչ հագավ,**
**Լե՜, լե՜, լե՜, լե՜, ջա՜ն, լե՜, լե՜,**

**Նստեց քարին, երգեց կաքավ,**
**Լե՜, լե՜, լե՜, լե՜, ջա՜ն, լե՜, լե՜:**

**Բարև՛ գարնան վառ արևին,**
**Լե՜, լե՜, լե՜, լե՜, ջա՜ն, լե՜, լե՜,**

**Բարև՛ ծաղկին, ծիլ–տերևին,**
**Լե՜, լե՜, լե՜, լե՜, ջա՜ն, լե՜, լե՜:**

«Գարուն եկավ» երգը կատարե՛ք այնպես, որ այն մեկ հնչի որպես երգ, մեկ՝ որպես պարերգ, մեկ՝ որպես քայլերգ:

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ունկնդրենք Ռոմանոս Մելիքյանի «Մանուկն ու ջուրը» և Յոհաննես Բրամսի «Հունգարական պարը»:

Սովորիր
Երգիր
Պարիր

Ինչպես զգացիք, «Մանուկն ու ջուրը» երգը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը դանդաղ է, երկրորդը՝ արագ: Արտահայտում է երկու տրամադրություն:

«Հունգարական պարը» եռամաս է: Առաջին մասը դանդաղ տեմպով է, երկրորդը՝ արագ, իսկ երրորդ մասը կրկնում է առաջին մասի երաժշտությունը:

Ուշադիր լսե՛ք և այդ երաժշտության հնչյունների ներքո փորձե՛ք կատարել պարային շարժումներ:



*«Հունգարական պարը» նվագակցենք ռիթմական նվագակցությամբ:*



*Սովորե՛ք «Լեպհո՛, լե՛, լե՛» ժողովրդական երգը:*

Սովորիր

Երգիր

Պարիր

## ԼԵՊՀՈ՛, ԼԵ, ԼԵ

*Կրկներգ*

Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛, լե՛,
Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛: } 2 անգամ

Հոդալլո՛ ջան, հոդալլո՛ ջան, հոդալլո՛,
Աչեր սիրուն, դարալլո՛ ջան, դարալլո՛: } 2 անգամ

Ելնենք սարը, բռնենք պարը,
Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛:
Բացվի օրը, մտնենք ձորը,
Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛:

*Կրկներգ* Հոդալլո՛ ջան...



Ինչպես զգացիք, այս երգն ունի երկմաս կառուցվածք: Կարո՞ղ եք ասել, թե ինչու:

# ՏԵՄԲՐ

Ունկնդրենք Ալեքսանդր Սպենդիարյանի «Օրորոցայինը» ջութակի և դաշնամուրի կատարմամբ:

Երգիր

Դուք անշուշտ լսեցիք և զգացիք, որ ջութակի և դաշնամուրի ձայներանգները իրարից տարբերվում են: Ձայներանգների տարբերությունները, որը կոչվում է ՏԵՄԲՐ, մեզ հնարավորություն են տալիս ճանաչելու և տարբերելու ինչպես նվագարանների, այնպես էլ տարբեր մարդկանց ձայները միմյանցից:

Այսուհետև երաժշտություն ունկնդրելիս տեսակը, տեմպը, բարձրությունը, ուժգնությունը, ռիթմը որոշելուց բացի՝ ուշադրությու՛ն դարձրեք երաժշտական արտահայտչամիջոցներից նաև տեմբրին: Այն ձեզ կօգնի ճանաչել նվագարանները, երգիչների ձայները և ավելի լավ ընկալել երաժշտությունը:



ՋՈՒԹԱԿ



ԴԱՇՆԱՄՈՒՐ



ԹԱՎՋՈՒԹԱԿ













Այս նկարներում միևնույն պատկերը արտահայտված է գունային տարբեր երանգներով, որոնք տարբեր ձևով են ներգործում դիտողի վրա:



*Պատմե՛ք բնանկարի գունային երանգների մասին։*

Սովորիր

Երգիր

Նվագիր

*Սովորե՛ք «Բարձրիկ Հայաստան» երգը:*

## ԲԱՐՁՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Կա մի բարձրիկ Հայաստան,
Մի գեղեցիկ Հայաստան,
Սեգ-սեգ սարեր նա ունի,
Պաղ-պաղ ջրեր հայրենի:

*Կրկներգ*

Լույս ժպիտն իր աչքերում՝
Նա գարուն է մեզ բերում,
Շունչ է տալիս մեր կյանքին,
Այգ է վառում մեր ճամփին:

Կա մի քաղցրիկ Հայաստան,
Կա մի ծաղկած Հայաստան,
Դար ու դար է նա անցել
Ու նոր կյանքով նորացել:

*Կրկներգ*

Լույս ժպիտն իր աչքերում՝
Նա գարուն է մեզ բերում,
Շունչ է տալիս մեր կյանքին,
Այգ է վառում մեր ճամփին:



*1. Ասացե՛ք, թե այս երգը քանի մասից է բաղկացած:*
*2. Ասացե՛ք ռիթմական նվագակցության տեմբրային երանգները:*
*3. Երգը կատարե՛ք ռիթմական նվագակցությամբ:*

# Երաժշտական ժամանց

## Երաժշտական արձագանք



Կանչ

Երգե՛ք և ցուցադրե՛ք ձեռքի նշաններով:



| | |
|---|---|
| ♪ ♪ ♩ ♩ ♩ | |
| մի րե դո մի դո | մի րե դո մի դո |
| ♩ ♩ ♪ ♪ ♩ | |
| դո րե դո րե մի | դո րե դո րե մի |
| ♪ ♪ ♪ ♪ ♩ ♩ | |
| դո րե մի ֆա սո սո | դո րե մի ֆա սո սո |

### ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Համերգային դահլիճում
Ես գլխավոր մի անձ եմ,
Ձեռքերս թափահարում,
Նվագախումբն եմ վարում:
Ի՞նչ են կոչում ինձ, գիտե՞ս,
Ասա՛՝ տեսնեմ՝ ո՞վ եմ ես...

Ես գնացի ներկայացման,
Երբ լսեցի, զարմացա.
Հարց են տալիս երգելով,
Պատասխանում երգելով...
Ո՞ւր գնացի, դե ասա՛,
Պատասխանի՛ր երգելով:

**Փորձե՛ք հորինել**

*Որոշե՛ք բանաստեղծությունների տրամադրությունը, ռիթմը և ձեր սովորած ձայնաստիճանների սահմանում հորինե՛ք մեղեդիներ:*

Ծառը մերկացավ,
Ջրկվեց տերևից,
Ձյունե փաթիլներ
Ընկան վերևից:

*Աթ. Խնկոյան*

Հե՜յ, կանա՛չ ախպեր,
Հե՜յ, ձանա՛չ ախպեր,
Արի՛, քեզ հետ բե՛ր
Արևի շողեր:

*Հովհ. Թումանյան*

# Խաչբառ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | | | 2 |
| 3 | | | 4 | | 5 | | |
| | | | | | | | |
| | | 6 | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | 7 | |
| | | 8 | | 9 | | | |
| | | | | 10 | | | |

*Ձախից աջ*

3. Նվագարանային լայնածավալ երաժշտության տեսակ:
6. Երկու շեշտի միջև ընկած հատված:
7. Ձայնաստիճան:
8. Երաժշտության տեսակ:
10. Երաժշտության տեսակ:

*Վերևից ներքև*

1. Ձայնաստիճան:
2. Հնգագծի սկզբում դրվող նշան, որը ցույց է տալիս ***սո*** նոտայի տեղը:
3. Ինչպե՞ս ենք անվանում մանկական ամենաբարձր ձայնը:
4. Մեկ շնչով կատարվող մեղեդու մասը:
5. Մեղեդու հնչյունները գրառելու նշանը:
6. Երաժշտության դանդաղ, միջին և արագ ընթացքը:
9. Ձայնաստիճան:

*Գտե՛ք բառերի ճիշտ տեղերը՝ հիշելով, որ ամեն տողի երկու բառերից առաջինը վերջանում է այն տառով, որով սկսվում է երկրորդ բառը:*

*Կռահի՛ր բառերը և գրի՛ր քո տետրում:*

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | 2 | | | | 3 | 4 | | 5 | | | 6 | | |

1. Մանկական երգչային ձայն:
2. Հնչյունի գույնը:
3. Ձայնաստիճանի անվանում:
4. Երաժշտության տեսակ, որի մեջ միասին հնչում են մեղեդին և խոսքը:
5. Գրենական պիտույք:
6. Տակտի հավասար զարկերի քանակը ցույց տվող նիշ:

# ՀԱՎԵԼՎԱԾ

## Հայկական ժողովրդական երգեր նոտաներով երգելու համար

*Երգեր **դո–ռե–մի** հնչյունաշարում*

### ՄԵՂՈՒ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Հայկական ժողովրդական պարերգ*




Թա՛փ տուր շուտ թևերը քո,
Բե՛ր վարդի նեկտարը:

Շատ համեղ է մեղրը քո,
Թո՛ղ ուտի Գոհարը:

### ԳԱՌՆՈՒԿ

*Խոսք՝ Սիլվա Կապուտիկյանի*
*Հայկական ժողովրդական պարերգ*




Չա՛լ տոտիկ, խա՛լ տոտիկ,
Եկանք սարերը մոտիկ:

Չալ տոտիկ, խալ տոտիկ,
Ես էլ, գառնուկս էլ պստիկ:

### ԱՂՎԵՍ

*Հայկական ժողովրդական երգ*




Իմ պապիկը շուտ հասավ,
Փրկեց հավին ու ասավ.

— Ա՛յ դու աղվես, ա՛յ սևերես,
Ե՛րբ պիտի դու խրատվես:

## Երգեր **ռե – մի – ֆա** հնչյունաշարում

### ԳԱՐՈՒՆ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Հայկական ժողովրդական երգ*




Ծիծեռնակը հին տան
Դուռը բաց գտավ,
Իր հին տունը նորից
Նոր երգով մտավ:

### ՕՐՈՐ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Հայկական ժողովրդական երգ*




Դե՜, քնի՜ր խաղաղ քնով,
Դեմքդ՝ ծաղկի ժպիտով:
Թո՛ղ քեզ լուսին ու աստղեր
Բերեն հեքիաթ երազներ:

## Երգեր **մի – ֆա – սոլ** հնչյունաշարում

### ՕՐՈՐ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Հայկական ժողովրդական երգ*



## ԵԿԵ՛Ք ՀԱՇՎԵՆՔ

*Հայկական ժողովրդական խաղերգ*




Երգ **րե – մի – ֆա – սո** հնչյունաշարում

## ՀՈՎՎԻ ԵՐԳԸ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*

*Հայկական ժողովրդական պարերգ*




Իմ գառները՝ ժիր ու կայտառ,
Խաղ են անում խոտերում,
Ջա՜ն, լե՜, լե՜, լե՜, ջա՜ն, լե՜, լե՜, լե՜,
Խաղ են անում խոտերում:

Երբ մթնում է օրը խաղաղ,
Գառներիս տուն եմ բերում,
Ջա՜ն, լե՜, լե՜, լե՜, ջա՜ն, լե՜, լե՜, լե՜,
Գառներիս տուն եմ բերում:

Երգեր **դո – րե – մի – ֆա** հնչյունաշարում

## ՇՈՒՆՆ ՈՒ ՀԱՎԸ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*

*Հայկական ժողովրդական խաղերգ*




Շունը լռեց՝ չկար ելք,
Ասաց՝ այ քեզ հավի խելք,
Կչկչալում մի հատ ես,
Հնչյունները չգիտես:

Ես ասում եմ ոչ թե հավ,
Այլ, լավ լսիր, հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ...
Ես հաչում եմ ինձ համար,
Ոչ թե քեզ եմ կանչում, հա՛վ:

## ՀՈ՛Յ, ՆԱ՛Ր

*Հայկական ժողովրդական պարերգ*




Ամպ է պատել սարին,
Հո՛յ, նա՛ր, հո՛յ նարե:

Կաքավը կայնել քարին,
Հո՛յ, նա՛ր, հո՛յ նարե:

### *Երգ **դո -րե - մի - ֆա - սո** հնչյունաշարում*

## ԲԱԶԵ

*Խոսք՝ Էդվարդ Ավագյանի*
*Հայկական ժողովրդական երգ*




Փայտը կառնեմ, քեզ «քը՛շ» կանեմ, «քը՛շ» կանեմ,
Ես մեր բակից քեզ կհանեմ, քեզ «քը՛շ» կանեմ, կհանեմ:
Ա՛յ չար բազե, հեռացի՛ր, հե՛յ,
Մեր բակից շուտ դե կորի՛ր, հե՛յ:

Բազեն վախից թևին տվեց ու թռավ,
Նա մեր բակից գլուխն առավ,
Գլուխն առավ ու կորավ:
Իմ ճուտիկ, քուջո՛ւջ արա, ջա՛ն,
Բազեն գնաց, էլ չի գա, ջա՛ն:

## *Երգեր լսողությամբ սովորելու համար*

### ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

*Խոսք՝ Վահան Գրիգորյանի*
*Երաժշտ.՝ Ռուբեն Ալթունյանի*




### ՈՒՂԻՂ ԿԱՐԳՈՎ

*Խոսք՝ Ղազարոս Աղայանի*
*Երաժշտ.՝ Ռոբերտ Պետրոսյանի*



## ՆԱԽՇՈ՛ՒՆ ԿԱՔԱՎ, ԿԱՔԱՎԻ՛Կ

*Հայկական ժողովրդական պարերգ*




## ՆԱՆԻԿ ԱՍԵՄ ԲԱԼԻԿԻՍ

*Հայկական ժողովրդական երգ*




## ՀԱՅՐԵՆԻՔ

*Խոսք՝ Ռուբեն Ղարիբյանի*
*Հայկական ժողովրդական երգ*



## ՔԵՌԻՆ ԵԿԱՎ ՄԵՐ ԲԱԿԸ

*Հայկական ժողովրդական երգ*




## ՀՈՊԱ ԶԱՐԿԵ՛ ՈՒ ՔԵԼԵ՛

*Հայկական ժողովրդական պարերգ*




## ԵԿԵ՛Ք ՄՐՑԵՆՔ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Հայկական ժողովրդական երգ*




Մենք խաղում ենք
Ու պարում ենք
Եվ օրեցօր
Զորանում ենք:

Դո՛ւք էլ, դո՛ւք էլ,
Հո ծույլի՛կ չեք,
Թե կարող եք,
Մե՛զ հասեք:

## ԳԱՑԵ՛Ք ՏԵՍԵՔ

*Հայկական ժողովրդական կատակերգ*




## ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՁՈՆԵՐԳ

*Հայերեն տեքստը՝ Արա Բաղդասարյանի*
*Երաժշտ.՝ Լյուդվիգ վան Բեթհովենի*



## ՋԱ՜Ն ԳԱՌՆՈՒԿ

*Հայկական ժողովրդական պարերգ*




## ԱՔԼՈՐԻԿԻ, ԹԽՍԻ ԵՎ ՃՈՒՏԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

*Խոսք՝ Հակոբ Աղաբաբի*
*Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի*



## ВО ПОЛЕ БЕРЁЗА СТОЯЛА

*Ռուսական ժողովրդական պարերգ*




## ՎԱԽԿՈՏ ԿԱՏՈՒՆ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Հայկական ժողովրդական երգ*




## ՎԱՐԴԱՎԱՌ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Հայկական ժողովրդական պարերգ*



## ԱՐՋԻ ՎԻՇՏԸ

*Խոսք՝ ժողովրդական*
*Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի*




## ԺԱՄԱՆԱԿԴ ԽՆԱՅԻ՜Ր

*Խոսք՝ Ռուբեն Ղարիբյանի*
*Հայկական ժողովրդական երգ*




Իմ պապիկը գործասեր
Ամեն անգամ ինձ կասեր.
— Թե դաս ունես, սովորի՛ր,
Թե գործ ունես, կատարի՛ր:

Օրը կանցնի, կգնա,
Ինչ որ չանես, կմնա,
Եվ մի օր էլ կտեսնես՝
Ուրիշներից հետ կընկնես . . .

Դու տղա ես, ժիր տղա,
Գործը քեզնից թող դողա:
Ուշքդ վրադ միշտ պահի՛ր,
Ժամանակդ խնայի՛ր:

## ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՁՄԵՌ ՊԱՊԻՆ

*Խոսք՝ Մկրտիչ Կորյունի*
*Երաժշտ.՝ Գեղունի Չթչյանի*




## ЁЛОЧКА

*Слова З. Александровой*
*Музыка М. Красева*




## ԱՐԵ՛Վ, ԱՐԵ՛Վ

*Խոսք՝ Ղազարոս Աղայանի*
*Հայկական ժողովրդական երգ*



## ԹԽՍԻ ԵՎ ԿԱՏՎԻ ԿՌԻՎԸ

*Խոսք՝ Հակոբ Աղաբաբի*
*Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի*




## ՄԱՅՐԻԿՍ

*Խոսք՝ Սիլվա Կապուտիկյանի*
*Հայկական ժողովրդական երգ*




Ով է ինձ կանչում, այն ո՞վ,
Մայրս՝ անուշ իր ձայնով:

Ո՞վ է ինձ ասում՝ ձագո՛ւկ,
Մայրս՝ շնչով իր տաքուկ: } *2 անգամ*

## ԿՌՈ՛ՒՆԿ, ԾԱ՛Փ ՏՈՒՐ ՈՒ ԹՌԻ՛

*Հայկական ժողովրդական պարերգ*




Էսօր լուսին նորել է,
Նորել է, բոլորել է:

Կռո՛ւնկ, ծա՛փ տուր ու թռի՛,
Կռո՛ւնկ, աջ թևի՛ս արի:

## ԳՈՎՔ ԶԱՄԲԱՐԻՆ

*Խոսք՝ Հակոբ Աղաբաբի*
*Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի*




## ՀԱՆԻ՛Կ ՆԱՅ

*Հայկական ժողովրդական պարերգ*



## ԼԵՊՀՈ՛, ԼԵ՛, ԼԵ՛

*Հայկական ժողովրդական երգ*




## ԲԱՐՁՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

*Խոսք՝ Նանսեն Միքայելյանի*
*Երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի*



## ԳԱՐՈՒՆ ԵԿԱՎ

*Խոսք՝ ժողովրդական*
*Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի*




## ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԳ

*Խոսք՝ Սիլվա Կապուտիկյանի*
*Երաժշտ.՝ Ստեփան Նաղդյանի*




Վազվզեցինք անտառում,
Հավաքեցինք մոշ գերուն,
Ձուկ բռնեցինք, մարզվեցինք,
Լավ–լավ գրքեր կարդացինք:

— Ես մեր կանաչ Ծաղկաձորում,
— Ես մեր Նորքի զով ճամբարում,
— Ես Սևանում, ես Ավանում,
— Ես էլ մեր գյուղ Հացավանում:

# ՆՈՐ ՏԱՐԻ

*Խոսք՝ Կ. Գևորգյանի*
*Երաժշտ.՝ Ռոբերտ Պետրոսյանի*




*Կրկներգ*

Քո լույսով ողողված
Քաղաքում մեր հարազատ
Մենք կապրենք ողջ տարին
Երջանիկ, բարի:

Ե՛կ, դու իջի՛ր պարով,
Աստղերի ջինջ խաղով
Մեր ծառին այս տոնական,
Մեր ծառին այս մոգական,
Որ երազն է մեր կանաչ,
Ջա՛ն, մեր կանաչ:

## ՋԱ՜Ն, ՋԱ՜Ն, ՋԱ՜Ն, ԱՇՈՒՆ Է

*Խոսք՝ Հակոբ Աղաբաբի*
*Երաժշտ.՝ Դանիել Ղազարյանի*




Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն, աշուն է,
Տե՜ս, տե՜ս, տե՜ս, նախշուն է,
Նուռ, սերկևիլ ուտելու
Նա մեզ այգի է կանչում:

Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն, աշուն է,
Տե՛ս, տե՜ս, տե՜ս, նախշուն է,
Տղա–աղջիկ շարքերով
Նա մեզ դպրոց է կանչում:

## ՀՈ՜Յ, ՆԱՐԵ՜

*Հայկական ժողովրդական պարերգ*




Հո՜յ, Նարե՜,
Երեսիդ շողին մեռնեմ,
Ջա՜ն, Նարե՜,
Աչքերիդ կապույտ ծովին:

Հո՜յ, Նարե՜,
Ջաղացս՝ պատիկ–պատիկ,
Ջա՜ն, Նարե՜,
Աչքերդ՝ նռան հատիկ:

Հո՜յ, Նարե՜,
Ամեն քեզի տեսնելուց,
Ջա՜ն, Նարե՜,
Համ Համբարձում, համ Զատիկ:

# ԾԻԼԻ՛, ԾԻԼԻ՛

*Հայկական ժողովրդական պարերգ*




Կաքավ նստեց էն քարին, էն քարին,
Անուշ երգեց, վառ ծաղկեց ծիրանին,
Նա մնաց ու երգեց ողջ տարին,
Ծիլի՛, ծիլի՛, ծիլի՛, ծիլի՛, ծիլ–ծիլի՛:

# ԷԾԻԿ

*Խոսք՝ Հակոբ Աղաբաբի*
*Երաժշտ.՝ Դանիել Ղազարյանի*




Պոզերդ՝ բիզ–բիզ,
Մորուքդ՝ մի թիզ,
Ոտներդ՝ բարակ,
Վազում ես արագ,
Արի՛, ցի՛կ, ցի՛կ, ցի՛կ,
Ա՛յ իմ սև էծիկ,
Արի՛, ցի՛կ, ցի՛կ, ցի՛կ,
Ա՛յ իմ սև էծիկ:

## ՄԻՇՏ ԱՌՈՒՅԳ

*Խոսք՝ Լիպարիտ Սարգսյանի*
*Երաժշտ.՝ Էմմա Միհրանյանի*




Երբ որ ամեն առավոտ
Շնչում ենք մենք մաքուր օդ,
Ասես առած թռչնի թև՝
Մենք քայլում ենք շատ թեթև:

*Կրկներգ* Ցատկում վեր, ցատկում վար,
Դեպի աջ և դեպի ձախ,
Մեր կանաչ պուրակում
Վազվզում ենք, թռչկոտում,
Ուրախ երգում, կատակում:

Ով ուզում է միշտ առողջ,
Ուրախ և զվարթ լինի,
Թող գա նա մեզ հետ այգի
Ու մարզանքներ կատարի:

*Կրկներգ* Ցատկում վեր, ցատկում վար:

## ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱՏԸ

*Խոսք՝ Հովհ. Թումանյանի*
*Երաժշտ.՝ Դանիել Ղազարյանի*




— Էն Համոն թաքուն մածունը կերավ,
Գնաց տատի մոտ ինձ վրա դրավ,
Հիմի տատիկի ետևից ընկած՝
Ինձ են ման գալիս մի–մի փետ առած,

Ո՞ւր է, ասում են, ո՞ւր է գող փիսոն...
Ա՜խ, թե մի գտանք, մածուն ցույց կտանք:
Փիսիկը նստել մի մութ անկյունում,
Ունքերը կիտել ու լաց է լինում:

## ՇԱԽՈՎ–ՇՈՒԽՈՎ

*Հայկական ժողովրդական քայլերգ*




Սարերը ման եմ եկել, | Շախով–շուխով ման կգամ,
Ոտքս քարին է դիպել: | Շորորալեն պար կգամ: } *2 անգամ*

# ԹՈՒԽՍՆ ԻՐ ՃՈՒՏԻԿՆԵՐՈՎ

*Խոսք՝ Հակոբ Աղաբաբի*
*Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի*




*Թուխս*

— Կարլա՛խկ, կա՛–կա՛,
Այո՛, շատ կա,
Բայց չցրվեք,
Զգո՛ւյշ կացեք:
Բազեն կգա,
Վրա կտա,
Ձեր չորս կողմը
Ա՛չք ածեք:

*Ճուտիկներ*

— Չէ՛, չէ՛, ծի՛վ–ծի՛վ,
Մենք հավի ճիվ,
Չենք հեռանա,
Մայրի՛կ ջան:
Ո՞նց թե, ծի՛վ–ծի՛վ,
Ցաք ու ցրիվ:
Մեզ հերիք է
Մեր շրջան:

*Թուխս*

— Կարլա՛խկ, կարլա՛խկ,
Ա՛յ իմ ճուտեր,
Շատ–շատ մորեխ,
Շատ մժեղ
Պետք է չուտել,
Այո՛, չուտել,
Ձեզ, հավատա՛,
Վնաս կտա:

## ԿԱՏԱԿԵՐԳ

*Հայկական ժողովրդական երգ*




— Պուպո՛ւ, պուպո՛ւ, ջա՜ն պուպու,
Հացերն ո՞ւմ ես տալու դու:
— Քե՛զ, քեզ, քեզ, քեզ, չտխրես,
Մի լավ հաց էլ կտամ քեզ:

## ՏՈ, ԼՈՐԻ ԼՈՅ

*Հայկական ժողովրդական կատակերգ*




— Ո՞ւմ է բերել:
— Մարանին,
Որ նստել է գերանին,
Բուրդ ու բամբակ է գզում,
Քարավանին է սպասում:

# ՄԱՐՏ

*Խոսք՝ Հովհ. Թումանյանի*
*Երաժշտ.՝ Միքայել Միրզայանի*



# ԱՐԵՎԻ ՊԵՍ ՃԻԹ ԱՆԵՆՔ

*Խոսք՝ Հովհ. Կոստանյանի*
*Երաժշտ.՝ Անտոն Մայիլյանի*




Երթանք սարը վազեվազ,
Քամին կտա նազենազ,
Շուշան քաղենք, Շուշա՜ն ջան,
Առուն կգա քչքչան:
Լե՜, լե՜, լե՜:

Սարից իջնենք սարի քով,
Վարդի թփեր քովեքով,
Թփերի տակ պահ մտնենք,
Շուքերի տակ պար բռնենք:
Լե՜, լե՜, լե՜:

## TIRRA–LIRRA–LIRRA

*Անգլիական երգ*




## ԲԱՍԵ՛Ն ՊԱՐԻ

*Հայկական ժողովրդական պարերգ*




Տղա՛, արի՛, բռնե՛, պարի՛,
Հա՜յ, դոմբարի, ջա՜ն, դոմբարի,
Պարը արժե ողջ աշխարհը,
Հա՜յ, դոմբարի, ջա՜ն, դոմբարի, դոմբարի:

# ՍԱ՛Ր, ՍԱ՛Ր

*Հայկական ժողովրդական պարերգ*




Սա՛ր, սա՛ր,
Ես սարերի ծաղիկն եմ,
Ջա՛ն, ջա՛ն,
Ես Լևոնի քույրիկն եմ:

Սա՛ր, սա՛ր,
Էն սարին սար չեմ ասի,
Ջա՛ն, ջա՛ն,
Վատ մարդուն ջան չեմ ասի:

# ՔՈՉԱՐԻ

*Հայկական ժողովրդական պարերգ*



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Երաժշտության երեք տեսակները 5
Քայլերգ 7
Քայլերգի տեսակները 8
Պար 12
Պարի տեսակները 13
Երգ 17
Երգի տեսակները 19
Ինչպես են գրառում երաժշտական հնչյունների բարձրությունները 21
Երաժշտության տեսակները հանդես են գալիս միասին 24
Երաժշտական ժամանց 26
Ինչի մասին է պատմում երաժշտությունը 28
Երաժշտությունն արտահայտում է բնավորության գծեր 30
Երաժշտությունը նաև նկարագրում է 32
Երաժշտական ժամանց 40
Ուր են տանում երգը, պարը, քայլերգը 42
Երգը օպերայում, բալետում 46
Երգը սիմֆոնիայում 48
Պարը բալետում, օպերայում, սիմֆոնիայում 50
Քայլերգը օպերայում, բալետում 53
Քայլերգը սիմֆոնիայում 55
Երաժշտական ժամանց 56
Երաժշտական խոսք 58
Երաժշտական ստեղծագործության կառուցվածքը 60
Տեմպը 62
Երաժշտական ժամանց 66


## ՀԱՎԵԼՎԱԾ


Մեղու 68
Գառնուկ 68
Աղվես 68
Գարուն 69
Օրոր 69
Օրոր 69
Եկե՛ք հաշվենք 70
Հովվի երգը 70
Շունն ու հավը 70
Հո՛յ, նա՛ր 71
Բազե 71
Դպրոցի ժամփան 72
Ուղիղ կարգով 72
Նախշո՛ւն կաքավ, կաքավի՛կ 73
Նանիկ ասեմ բալիկիս 73
Հայրենիք 73
Քեռին եկավ մեր բակը 74
Հոպա՛ զարկե ու քելե՛ 74
Եկե՛ք մրցենք 74
Գացե՛ք տեսեք 75
Ուրախության ձոներգ 75
Ջա՛ն գառնուկ 76
Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը 76
Во поле берёза стояла 77
Վախկոտ կատուն 77
Վարդավառ 77
Արջի վիշտը 78
Ժամանակդ խնայի՛ր 78
Մանուկներն ու Ձմեռ պապին 79
Ёлочка 79
Արև՛, արև՛ 79
Թխսի և կատվի կռիվը 80
Մայրիկիս 80
Կռո՛ւնկ, ծա՛փ տուր ու թռի՛ 80
Գովք Զամբարին 81
Հանի՛կ նայ 81
Լեպիռ՛, լե՛, լե՛ 82
Բարձրիկ Հայաստան 82
Գարուն եկավ 83
Վերադարձի երգ 83
Նոր տարի 84
Ջա՛ն, ջա՛ն, աշուն է 85
Հո՛յ, Նարե՛ 85
Ծիլի՛, ծիլի՛ 86
Էծիկ 86
Միշտ առույգ 87
Փիսիկի գանգատը 88
Շախով-շուխով 88
Թութակն իր ճուտիկներով 89
Կատակերգ 90
Տո, լորի լոյ 90
Մարտ 91
Արևի պես ճիթ անենք 92
Tirra-lirra-lirra 93
Բասե՛ն պարի 93
Սա՛ր, սա՛ր 94
Քոչարի 94

ՅՈՒՐԻ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
# 2

*Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի*
*երկրորդ դասարանի համար*

Վերահրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Մարիամ Կանայան
Խմբագիր և սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորող՝ Ժագ Թոփալագյան
Նոտագրող՝ Հասմիկ Ղուկասյան
Շարվածքը՝ Սուսաննա Ավետիսյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ
Պատվեր՝ ՀՀԿԳՄՍՆՄԱԱՊՁԲ–21/26
Տպաքանակը՝ 34 118

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak